

Սա, պատմականորեն սխալ, հիմնադրվել է և վտանգավոր մտայնություն է: Այսպես մտածողները թող ուշադիր կարդան զրքի վաւերագրերի բաժինը (էջ 130-264) եւ հայ-թուրք յարաբերութիւնների փաստերին ի մօտոյ ծանօթանալուց յետոյ ասեն, թէ տուեալ պայման ու հանգամանքներում ի՞նչ պէտք է մտածէր ու անէր ազգը, որպէսզի չպատահէր այնպէս, ինչպէս որ պատահեց ամբողջ 400 տարի ու դեռ այսօր էլ շարունակւում է անմարդկային շրջափակումով, պարտադրուած անհաւասար պատերազմով եւ մասամբ նորին...

Հայաստանի եւ հայութեան մասին պատմական ճշմարտութիւնը բացայայտելու, քարոզելու եւ տարածելու կենսականօրէն կարեւոր գործում Փրոֆ. Աւետիս Փափազեանի այս գիրքը գիտական լուրջ ներդրում է, արժանի անվերապահ քաջալերանքի եւ անկեղծ շնորհակալութեան:

Հեղինակ՝ ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ .

Գրախօսեց՝ ՍԱՐԳԻՍ ԵԱՓՈՒԾԵԱՆ

ԳՐԱԳԷՏԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԸ

Երբ ֆրանսացի երեւելի գրագէտ Ֆլօպէր քսանընիմգ տարեկան էր, գնաց հրատարակչիչ թով եւ ցոյց տուաւ Անոր իր գրած վէպին ձեռագիրը:

Հրատարակչիչը կարողաց ձեռագիրը եւ քանի մը օր ետք, յայտնեց գրագէտին, թէ շատ հաւանած էր եւ որոշած էր զայն տպագրել: Բայց միաժամանակ՝ աւելցուց, թէ վճարում պիտի չընեն:

- Երբեք սովորութիւն չունիմ վարձատրելու երիտասարդ գրողներու առաջին գործերը, ասիկա իմ քացարձակ սկզբունքս է:

- Բայց պարոն, ասիկա իմ քսաններորդ գործն է, կը պատասխանէ Ֆլօպէր շեշտուած սրտնեղութեամբ,

- Բայց ո՞ր եմ միւսները, ինչո՞ւ հետոյ չբերիր, հարցուց հրատարակչիչը զարմացած:

- Պատուեցի թոյորն ալ՝ գոհ չէի ոչ մէկէն, եղաւ հեղինակին կտրուկ պատասխանը:

Այս խօսքերը շատ հաճելի թուեցան հրատարակչիչին եւ վճարեց վէպին համար նշանակալից գումար մը:

Մանրավէպեր էջ 87

Վարդան Ա. Քինյ.

Տիպէրեան